ՎԱՐՊԵՏԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ. ԾԱՂԿՅԱ ԴԱՀԼԻՃ, 1956 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7

ՓԱՌՔ ՄԵԾԱՑ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ. Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՓԱՌՔ ՄԵԾԱՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ
ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա-Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՑՇ-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ
(1955 թ. նոյեմբեր)

Ուրախացրիր մեր ժողովրդին՝ ութսունամյա Քո հոբելյանի ոսկի պարգեվով:

Հուզեցիր, ոգևորեցիր ու ներշնչեցիր բոլոր հայերին: Եվ մեր սրտերի բոլոր լարերից աղոթք բարձրացավ հայոց Աստուծուն Քո կյանքի համար, Քո փառքի համար:

Քո մեծ սրտի մեջ, Քո լույս խոսքի մեջ մեր ժողովուրդն իր հոգին գտավ՝ բյուրեղացումը իր վառ հույզերի, իրավ խոհերի, արդար տենչերի:

Պատմությունն ամբողջ Քո կյանքի՝ պատմությունը եղավ Քո ազիզ ազգի այրող վշտերի, որոնումների, հաղթանակների:

Արշալույսին վառ Քո կյանքի սեմին գիշեր էր իջել հայոց երկնքին, բայց մայրամուտին Քո ընծա կյանքի արշալույս ծաթեց Հայոց աշխարհին:

Այդ լուսաբացին Դու արև եկար և Քո լույս հոգով հայոց արևին լույսն աճեցրիր Քո կյանքի երգով, Քո հույսի երգով, Քո սիրո երգով:

Սիրելի՛ Վարպետ, թանկագի՛ն Վարպետ, հարազա՛տ Վարպետ: Քեզ արև օրեր և լույս հավիտյան Տիրոջ օրհնությամբ և սուրբ հավատքի անմահ զորությամբ:

ՎԱՉԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(«Էջմիածին» ամսագիր, 1955 թ., Նո. ԺԲ, էջ 8)